ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐ



# Երգը թռչուն է

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՈՒՐ

# Սերը թռչուն է

A 135551

«Հայաստան» հրատարակչություն
Երևան • 1974

## ԿՈՄԻՏԱՍԻՆ

*Դու մեր հորովելի հանճարամիտ հոտաղ,*
*Կյանքի արորը քո սև ցելերում մնաց,*
*Քո եզները փախան խենթ ու արնաշաղախ,*
*Քո գութան ու մաճից մեզ մի ճիպոտ մնաց...*
*Դու հերկեցիր նախնյաց հարուստ հերկը երգի,*
*Ակոսեցիր հողը տողագրքի նման,*
*Ու քո գերզգայուն, անեղծելի ցանքից*
*Ծլեց քաղցրամրմունջ մի տաղարան...*

*1963 թ.*